ՀԱՅԿ

ՀԱՆԴԷՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

HAIK

AN ARMENIAN JOURNAL

Edited by M. S. Gabriel, M. D. New York, N. Y. Vol. IV, 1894

Հասցէ
Editor of "HAIK" 202 West 23d St.,
New York.
U. S. America.
կամ Redaction de la Revue "HAIK" ԱՆ

ԳԱՅՄԱՆԸ
Տարեկան բաժնեգինն է
ամեն երկրաց համար
երկու տալեր կամ տասն ֆրանք
Կանխիկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեծ Կոտորած Հայոց. — Տեղեկագիրք Մեծ Կոտորածին.— Ամերիկայի Լրագրաց Աղաղակն Մեծ Կոտորածին Առթիւ.— Հայաստանի Վտանգն.— Միութեան Հիմունքն.— Ով Պիտի Պատասխանէ.— Գործունէութիւն Ամերիկայի Հայոց Մէջ.— Ի՞նչ Անել Պէտքէ.—ՀԱՅՔի Մասին. — Այլեւայլք։

ՄԵԾ ԿՈՏՈՐԱԾ ՀԱՅՈՑ

Զայն զուժեաց ի Հռամա,
Ողբումն և լալումն և աշխարումն յոյժ։

ԱՒԵՏԱՐԱՆ

Բովանդակ Հայութիւնն ի սուգ համակեալ է։ Հայ Աշխարհն սրտի կսկծակից մորմոքէն կատաղած կ'ողբայ իւր Սասնոյ եղբարց խժդժական կոտորածին վերայ։

Մեծ ճիւաղն բարկացած ահագին բանակ է յղեր մեր հարստահարեալ եղբարց դէմ, և մերայինք դիւցազնաբար մարտնչելով ինկած են։ Հազարաւոր սուրբ մարքու անմեղ մանկունք յօշ յօշ պատառուած են ի սուր ժանտաժուտ դահճաց։

Այս Ջարդի յապաղեալ գոյժն վերջապէս լսելով՝ քաղաքակիրթ աշխարհն սուրբ բարկութեամբ բորբոքեցաւ։

Ամերիկայի մէջ Հայեր լացին լալիւն մեծ և Միացեալ Նահանգաց ազնիւ ժողովուրդն ամեն տեղ խորին համակրութեամբ վշտակից եղաւ նոցա։ Նշանաւոր թէ աննշան ամեն Ամերիկացի, այր թէ կին, սոսկալով սոսկացին Ջարին այս զարհուրելի արիւնարբութենէն, և մէկ ձեռքով արտասուող աչքերն սրբելով հանդերձ միւսով ապտակեցին Ժանտին Ժպիրհ երեսներն։

Ամեն կողմէ կ'աղաղակեն թէ պարտ է ջախջախել Արեւելեան Գազանին շարաշէն գաւազանն։

Քաղաքակիրթ աշխարհի առջեւ իւր բովանդակ ահաւորութեամբ տնկուած կը կենայ Արեւելեան խնդիրն Հայկական Խնդրոյ մէջ մարմնացած, և կը պահանջէ անյապաղ լուծում։

Ամեն նշան կը ցուցնէ թէ այլ ևս ըստառած է քաղաքակիրթ ազգաց համբերութիւնն նկատմամբ արիւնարբու Բռնակալին։

Մաղթենք և ջան իգործ դնենք որ գայ ընդ հուպ օրն յորում քրիստոնեայ ժողովուրդք պիտի ազատին Օսմանեան մոլեգին և գազանամիտ բռնապետութեան լծէն։

ՏԵՂԵԿԱԳԻՐՔ ՄԵԾ ԿՈՏՈՐԱԾԻՆ

Կոտորածին գոյժն, ի հեռուկս թուրք կառավարութեան ապուշ ջանքերուն, վերջապէս յամր և ոլորապտոյտ ընթացքով հասաւ արտասահման։ Նիւ Եորքի և Միացեալ Նահանգաց բոլոր թերթերն Նոյ. 17ին շաբաթ օրն հրատարակեցին զայն իբրեւ աւուր մեծ լուրն և յաջորդ օրն երեւցան բազմաթիւ խմբագրականներ ցաստնալիր և արդարագատ։

Լոնտոնի ՍԹԱՆՏԱՐՏի Վառ-ոյեան թղթակցին տեղեկագիրն տուին իբրեւ առաջին, որ զկոտորածն պուլկարականին հաւասար կը հռչակէր ըստ կարեւորութեան։ «Հայերն, կ'ասէ, տուրք վճարել մերժեցին վասն զի քրդական յափշտակութեանց երեսէն այնքան չքաւորած են որ բոլորովին անկարող են։ Այս հաւանօրէն ճշմարիտ էր։ Եւ Այս եղաւ խռովութեանց սկիզբն։ Զօրք յղուեցան վճարումն բռնի անել տալու, սակայն ետ մղուեցան յաղթուած։ Յայնժամ Պիթլիսի կառավարիչն մեծազօր կանոնաւոր բանակաւ հասաւ ի վերայ։ Ժողովուրդն տեսնելով թէ դիմադրելու ճար չունի, անձնատուր եղաւ, բայց կառավարիչն որոշեց անոնց օրինակաւն դաս մի տալ Հայոց։ Հրամայեց զօրաց կրակ անել անպաշտպան ամբոխին վերայ, և նոքա հնազանդեցան փութով, և դադար առին միայն յետ կոտորելոյ 25 գիւղերու բնակիչներն, որոց թիւն հազարաւոր էր։ Ոմանք կ'ասեն 6,000 ջարդուած են։

Լոնտոնի Հայենասիրական Միութեան նախագահ Տիար Յակոբեան ևս Պիթլիսէն ստացած էր տեղեկագիր մի զոր հրատարակեց և յորմէ կ'երեւէր թէ տեղ մի 300 կանայք բազմակրկնակ լլկմանց զօրականին ենթարկուելէ յետոյ մորթուած էին։ Այլուր, 200 կանայք կ'իյնան յոտս հրամանատարին և գթութիւն կը հայցեն, հրամանատարն նախ նոցա բռնաբարումն կը հրամայէ և ապա խողխողումն։ ևն. ևն.։

Ն. Ե. Հէրալտ Նոյ. 27ին հրատարակեց երեք նամակներ որք Պիթլիսէն գրուած էին ոչ-Հայերէ, և կարելի է գուշակել թէ ամերիկացի միսիոնարք են գրողներն, և լիուլի կը հաստատեն ահաւոր եղելութիւնն։ Նամակաց մին որ Սեպտ. 26 թուականն կը կրէ, կը պատմէ թէ «Մեր մօտակայ դաշտին մէջ հիւանդութիւն երևցած լինելով զօրաց չդթայ հաստատեցին, և այնպէս հնարեցան խափանել լրոց հաղորդումն նկատմամբ այն գործին որով զբաղած էին զօրքն այն դաւառում։ Շատ տարակոյս չկայ թէ հոն Մշոյ ետևն կըրկնուած է ինչ որ 1877ին տեղի ունեցաւ ի Պուլկարիա։ ... Կը լսեմք թէ 48 գիւղեր սպառոսպուռ ջնջուած են։»

Երկրորդ նամակն, նոյնպէս Պիթլիսէն է, Հոկտ. 3 թուականաւ։ «Մուչէն նամակ առինք երէկ, որ կը ցուցնէ թէ հնտախտի ժանտագոյն տեսակ մի կը ճարակի անդ։ 25—30 մահ կը պատահի օրն։ Մուսիւլման կանանց վերայ աւելի անողորմ է ցաւն։ Կը կասկածիմք թէ այս չարաժահր տեսակն ըստ մասին ծագեցաւ ժանտահոտութենէն այն կոտորածին որ ի Լերինս անդ (Սասնոյ) տեղի ունեցած է։ Հետ զհետէ աւելի կը հաստատուի թէ կոտորածն աւելի ընդարձակ եղած է քան ի սկզբան կ'ենթադրուէր։»

Երրորդ նամակն Կ. Պոլսէն է, Հոկտ. 31, «Պիթլիսէն համառօտ լուր առինք թէ 6,000 այր, կին և մանուկներ ջարդուած են ի ձեռն զօրաց և Քրդաց։ Ահաւոր գոյժն հոս նոր կը սկսի լուս լինիլ, թէպէտ ջարդն տեղի ունեցած է ի սկզբան անդ Սեպտեմբերի։ Կոտորածին հրամանն ի մայրաքաղաքէ աստի արուեցաւ այն մտօք թէ մի քանի Քրդեր հայ գիւղերու հօտերն յափշտակած լինելով, Հայերն աւազակաց ետեւէն վազեր են հօտերն փրկելու համար, հետեւանքն եղած է կռիւ, յորում 12 քրդեր սպաննուած են։ Սպաննուած մարդիկն «կէս-պաշտօնական գողեր էին,» այսինքն իբրեւ զօրք զինուորագրուած և զինուած այլ ոչ ընդ ղեկավարութեամբ։ Տեղական իշխանութիւնք հեռագրած են թէ Հայք սպաններ են «Սուլթանի զօրքերէն մի քանին։» Սուլթանն իսկոյն հրամայած է որ հեծեալ և հետեւակ զօրք յղուին հայկական ապստամբութիւնն ընկճելու, և նոքա ալ նոյնպէս արին, միայն թէ, ոևէ ապստամբութիւն չգտնելով, ոչնչացուցին գաւառն որպէս զի ապագայում ապստամբութիւն չկրնայ պատահիլ։»

Նիւ Եորքի մէջ ամերիկացիք որոշած են մաս-միթինկ անել Սասնոյ կոտորածին դէմ բողոքելու Դեկտ 10ին։

ԱՄԵՐԻԿԱՑԻ ԼՐԱԳՐԱՑ ԱՂԱՂԱԿՆ ՍԱՄՆՈՑ ԿՈՏՈՐԱԾԻՆ ԱՌԹԻՒ

Ցօդուածներու, խմբագրականներու թիւն անհամար է։ Ասա կուտամք իրրեւ նմոյշ մի քանի խօսք նշանաւորագոյն թերթից խմբագրականներէն.—

ԹՐԻՊԻՈՒՆ. «Բաւական ստոյգ է թէ վայրագ կոտորածոց և փաչայական բռնապետութեան ահաւորագոյն գլուխներէն մին աւելցած է Թրքաց ապստամբեցուցիչ իշխանութեան պատմութեան վերայ յԱրեւելս։ ... Հայաստան կարօտ է խաղաղութեան կարգի և ապահովութեան ընդդէմ զօշաքաղ հարկահաւաքչաց և վայրենի ցեղից յարձակմանց։ Ի՞նչ յոյս կրնայ լինիլ լաւագոյն կառավարութեան և խաղաղ յառաջդիմութեան ցորչափ Թրքական խոստումներ լինին դրժուելու համար։»

ՀԷՐԱԼԴ. «Ամենայն նշան կը ցուցնէ թէ այսպիսի խժդժութիւնք պիտի կրկնուին մինչև որ Հայ ժողովուրդն ջնջուի Փոքր Ասիայէն, ըստ բաղձանաց Պոլսական իշխանութեանց։»

ՍԸՆ. «Ուրիշ դարման չկայ Թուրք կառավարութեան համար բայց եթէ ջընջումն։»

ԹԱՅՄՋ. «Բովանդակ քաղաքակրթաշխարհն դէտ կայ Անգլիոյ ընթացից։ ... Եթէ Անգլիա աչք գոցէ այս (արհաւրաց), զայրութի այնպիսի արտաքեղում մի պիտի առաջ գայ որոյ առջեւ. կենալ դժուար պիտի լինի իրեն։»

ՍԸՆ. «Անգլիոյ պաշտպանեալն, անասելի անասունն ի Կ. Պոլիս, նորէն գործած է ըստ իւր բնութեան, և նորոգած է վաղածանօթ նախճիրքն իւր քրիստոնեայ հըպատակաց մէջ որոց վերայ Անգլիա երկիցը պահպանած է նորա իշխանութիւնն։ Այս արեան հօտն պիտի հասնի՞ Ռուս Նիքոլայեցի ռնգաց թէ արդեօք Արեւելից քաղաքակրթիչն ձեռնթափ պիտի լինի իւր պահպանութենէն։ Եթէ Նիքոլա վրիպի գործելէ, յայնժամ բոլոր աշխարհ պիտի տեսնէ թէ Աղէքսանդր չատ շուտ մեռաւ։»

ՈՒԸԼԶ. «Անասելի Թուրքն մեծ պատիւ կ'անէ Ուըրլտին և ուրիշ ամերիկեան թերթերու արտաքսելով զայնս իւր երկրէն։ Սակայն եթէ չարունակէ այսպէս քաջալերել Հայոց կոտորումն, շատ հաւանական է որ ստիպուի իւր սահմանագլուխներն պաշտպանել աւելի ահագին բանի մի դէմ քան լրագրական արշաւանքն։»

ՔՈՄՄԷՐՇԷԼ ԷՏՎԷՐԹԱՑՋԸՐ. «Հայոց հալածանքն ի ձեռս Թրքաց նոր բան չէ։ Հալածուողներուն համբերութիւնն զարմանալի եղած է, և իրենց խղճալի և բազմակրկնակ բողոքներուն առ Տէրութիւնս անլսելի մնալէն է որ մղուած են յապստամբութիւն։ ... Տարակոյս չկայ թէ այս անասելի արհաւրաց ... առաջին պատասխանատուն Մեծն Բրիտանիա է։»

ՄՈՐՆԻՆԳ ԷՏՎԷՐԹԱՑՋԸՐ. «Միւսիւլմանին քաղաքակրթութիւնն և Թրքին բընաւորութիւնն փոխուած չեն Կ. Պոլսոյ առումէն և Մահմետականին իրրեւ քաղաքական տէրութիւն Եւրոպեան ցամաքին վերայ հաստատմանէն ի վեր։ ... Քրիստոնեայ ազգաց պարտքն է Սուլթանէն երաշխիք պահանջել իւր իշխանութեան ներքև գտնուող քրիստոնեայ ժողովրդոց համար։ Լաւ և ս, Թուրքն պէտք է զրկուի այդպիսի ամեն իշխանութենէ։ Ցօդուտ քաղաքակրթութեան, պէտք է փութացունել օրն երբ մահիկն ու աստղն պիտի աներեւոյթ լինին Եւրոպայէն իրրեւ նշանակ ազգային տէրութեան մի յեւրոպա, և պէտք է դուրս վտարուին Սուրիոյ և Փոքր Ասիոյ քրիստոնեայ հասարակութեանց մէջէն։»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎՏԱՆԳՆ

Թէև լիակատար և ճշդրտապատում տեղեկութիւնք կը պակսին դեռ, տրուած լուրերէն կը վախցուի թէ Սասուն ոչ ևս է։ Եւ Սասուն Հայաստանի ամրագոյն և արի գաւառն էր, բուն այն մասին մէջ որոյ համար ինքնօրինութիւն կը պահանջէինք։ Մեր կորուստն ահագին կարեւորութիւն ունի, և վերջին աստիճան անմխիթարական պիտի լինի եթէ եսրոպեան միջամտութեան առիթ չհանդիսանայ։ Եթէ այսպէս մի քանի տարի ևս բուն Հայաստան Թրքաց անզսպեալ կատաղութեան դէմ անհաւասար ուժով մրցիլ ստիպուի, նա կը սպառի կոտորածներավ և գաղթմամբ, և այնպիսի անհնարին փոքրամասնութիւն կը մնայ անդ որ այլ ևս ոչ

Հայաստանի ինքնօրինութեան խնդիր և ոչ ազգային իշխանութեան յոյս կը մնայ։ Հայաստան իւր թմրած վիճակին մէջ երկար դիմացած էր, կորուստներն մէկ կողմէն դարմանելով, բայց այժմու յուզուած և մրցական պայմանաց մէջ չուտով պիտի հասնի իւր փրկութիւն կամ կորուստ։ Այս վտանգին մէջ զՀայաստան մղողներն մասնաւորապէս ահագին պատասխանատուութեան տակ են, և մեք ամենքս պարտիմք ամենայն ջանիւք հնարիլ զՀայաստան փրկել սպառնացող կորուստէն։

ՄԻՈՒԹԵԱՆ ՀԻՄՈՒՆՔՆ

Վերջերս Ամերիկայի Հայոց մէջ ընդհանուր միութեան պէտքն աւելի կը զգացուի։ Թղթակիցք ամեն կողմէ այդ իմաստով լուրեր կը հաղորդեն մեզ։ Ի Լին, ուր «Հնչակեանք և Լուսինեանք իրարու բարև տալ մեղք կը համարէին,» այժմ մոտեցած են իրարու և կը ջանան միութիւն կազմել։ Նիւ-Եորքի մէջ ևս անցեալ շաբթու ի մի առաջամեայ մասնախումբ կազմուեցան 9 երեւելի Հայեր որոց ոմանք իրար տարիներով քարկոծած էին։

Այս երեւոյթ մխիթարական է, զի կը ցուցնէ թէ երբ ազգային մեծ ալէտի առջեւ սրտերն մորմոքին, անձնական ոխն իւր ոյժ կը կորուսանէ։ Բայց տղայական կը լինի չափազանցել այս կեդրոնամէտ ձգտումներու արժէքն։ Դոքա վաղանցիկ են։ Զգացմանց հրահրեալ պահուն կրնան Միութիւններ լինիլ գործ մի շուտով իգլուխ հանելու համար, սակայն ցորչափ միութեան խորին պայմաններն պակսին, միութիւնն առերեւոյթ է և անտեւական։ Միութեան հիմունքն են (1) միացելոց վստահութիւնն և յարգանքն իրարու մասին, (2) էական կետերու վերայ նոցա համախոհութիւնն։

Առանց առաջամեայ միութեանց դէմ խօսելու— զի այդպիսի միութիւնք երբեմն հարկաւոր են— կը կրկնեմք ուրեմն թէ յարգանքի փոխադարձ զգացումտածող և ազգային քաղաքականութեան ու դաւանանքի վերայ համամիտ գտնուող անհատներ միայն պարտին և կարող են ճշմարիտ միութիւն կազմել։ Եւ Այդպիսի ճշմարիտ միութեան անունն է կուսակցութիւն— յարգելի և օգտակար տեսակէն կուսակցութիւն։

«Տիեզերական Միութեան» և «Կեդրոնական Ցանձնախումբի» վերաբերութեամբ մեր բոլոր քարոզութեանց միտքն այսպիսի միութիւն մի կազմել էր։ Մեր Ազգին մէջ կան բուն պահպանողականներ որք համոզուած կը մնան թէ Թրքահայոց խնդիրն իրաց բնական ընթացքին պէտք էր թողուլ— այսինքն թողուլ որ Օսմանեան պետութիւնն իւր բնական մահուամբ մեռնէր և քրիստոնեայ հպատակաց համար սկսէր մխիթարական նոր շրջան։ Այս համոզում կրողներուն մէջ կան զգօն և լուսամիտ մի քանի եկեղեցականներ ու աշխարհականներ։ Սոցա բոլորովին հակառակ ծայրն են արմատականք, որք համոզուած են թէ իրաց բնական ընթացքին սպասել ոճիր է, պէտք է մոլեգին մղում տալ դէպքերու ընթացքին և ոևէ լուծման հանդիլ։

Այս երկու Ծայրայեղ կուսակցութեանց միջև կը գտնուին Հայոց մեծամասնութիւնն, որք կը մտածեն թէ ոչ պէտք է բոլորովին կրաւորապէս սպասել որ դէպքերն իրենց բնական յամր ընթացքն կատարեն և ոչ ալ յախուռն գահավիժել զայն։ Այս համոզումն կրող Հայեր չափաւոր կամ ազատական կը կոչուին, որոց տրամադրութիւնք և ընթացք կ'եղանակաւորին ի հարկէ դէպքերու շրջափոխութեան համեմատ։

Այս մեծ կուսակցութիւնչպիտի կարենայ մեծ դեր կատարել ցորչափ չկազմակերպուի և իւր կեդրոնական Ցանձնախումբ չունենայ։ Դոքա փոքր մասն տեղական ընկերութեանց և Հայրենասիրական Միութեանց մէջ մարմին և ձև առած է։ Ցանկալի է որ այս ցաւագին դէպքերն մղում տան դոցա միութեան և չուտով իրանայ կեդրոնացման առաջարկն։

Արթնցէ՛ք, տեղակա՛ն Հայրենասիրական Միութիւնք, և փութով բանակցութեան սկսեցէք ընդհանուր միութիւն և կեդրոն մի կազմելու նպատակաւ։ ՀԱՅՐ երջանիկ պիտի լինի, եթէ կարենայ ոևէ կերպիւ գործի լինիլ այդ հաղորդակցութեանց և այդ կեդրոնացման։

Նորապսակ Զար Նիքոլայի մասին առ հասարակ կը զրուցուի թէ մեծ բարեկարգութիւններ պետութեան մէջ մուծանելու ջանալ սկսած է։

«Տիեզերական Միութեան» և «Կեդրոնական Ցանձնախումբի» վերաբերութեամբ մեր բոլոր քարոզութեանց միտքն այսպիսի միութիւն մի կազմել էր։ Մեր Ազգին մէջ կան բուն պահպանողականներ որք համոզուած կը մնան թէ Թրքահայոց խնդիրն իրաց բնական ընթացքին պէտք էր թողուլ— այսինքն թողուլ որ Օսմանեան պետութիւնն իւր բնական մահուամբ մեռնէր և քրիստոնեայ հպատակաց համար սկսէր մխիթարական նոր շրջան։ Այս համոզում կրողներուն մէջ կան զգօն և լուսամիտ մի քանի եկեղեցականներ ու աշխարհականներ։ Սոցա բոլորովին հակառակ ծայրն են արմատականք, որք համոզուած են թէ իրաց բնական ընթացքին սպասել ոճիր է, պէտք է մոլեգին մղում տալ դէպքերու ընթացքին և ոևէ լուծման հանդիլ։

Այս երկու Ծայրայեղ կուսակցութեանց միջև կը գտնուին Հայոց մեծամասնութիւնն, որք կը մտածեն թէ ոչ պէտք է բոլորովին կրաւորապէս սպասել որ դէպքերն իրենց բնական յամր ընթացքն կատարեն և ոչ ալ յախուռն գահավիժել զայն։ Այս համոզումն կրող Հայեր չափաւոր կամ ազատական կը կոչուին, որոց տրամադրութիւնք և ընթացք կ'եղանակաւորին ի հարկէ դէպքերու շրջափոխութեան համեմատ։

Այս մեծ կուսակցութիւնչպիտի կարենայ մեծ դեր կատարել ցորչափ չկազմակերպուի և իւր կեդրոնական Ցանձնախումբ չունենայ։ Դոքա փոքր մասն տեղական ընկերութեանց և Հայրենասիրական Միութեանց մէջ մարմին և ձև առած է։ Ցանկալի է որ այս ցաւագին դէպքերն մղում տան դոցա միութեան և չուտով իրանայ կեդրոնացման առաջարկն։

Արթնցէ՛ք, տեղակա՛ն Հայրենասիրական Միութիւնք, և փութով բանակցութեան սկսեցէք ընդհանուր միութիւն և կեդրոն մի կազմելու նպատակաւ։ ՀԱՅՐ երջանիկ պիտի լինի, եթէ կարենայ ոևէ կերպիւ գործի լինիլ այդ հաղորդակցութեանց և այդ կեդրոնացման։

Ո՞Վ ՊԻՏԻ ՊԱՏԱՍԽԱՆԷ

Շիքակոյ 24 Նոյ. 1891

(Հետեւեալ կարեւոր նամակն ստիպուած եմք շատ համառօտած տալ, ի չգոյէ տեղւոյ։)

Տեղւոյս ազգայինք ևս յուզուած են սաստիկ և կը ջանան Մաս-Միթինկ մը կազմել տեղացի նշանաւոր անձերով։ Այդ նպատակաւ երեք որոշեալ ազգայինք կը դիմեն քաղաքիս նշանաւոր լրագրի մի խմբագրապետին՝ անոր աջակցութիւնը խնդրելու, և սա կը հարցնէ թէ ինչ է Հայոց պահանջը։ Ի հարկէ պատասխանուած է այն հարցին այս կամ այն կերպով։ Իմ նպատակս չէ քննադատել տրուած պատասխանը։ Միայն կուզեմ մեր ազգայնոց ուշադրութիւնը հրաւիրել էական այն խնդրոյն թէ «ո՞վ պիտի պատասխանէ» այսպիսի հարցմանց։ Ամեն կուսակցութիւն, և ամեն կուսակցութեան անձնիւր անդամը, եթէ չափազանցութիւն չի լինիր, շատ կամ քիչ տարբեր պատասխան մի ունին իրենց բերնին մէջ։ Օգտակա՞ր է այս կերպ գործել։ Իմ կարծիքս է թէ ոչ երբէք։ Պէտք է ունենամք հեղինակաւոր մարմին մի որ ազգին անունով խօսի, գիտնայ թէ ինչ պէտք է խօսի և ինչ կերպով։ Ի հարկէ այս առաջարկը անախորժ կը թուի անոնց որք առաջնորդ և իշխանութիւն աւելորդ կամ անբնական բաներ կը համարին։ Ես հարկ չեմ սեպեր ուէ խօսք մը ըսել այդպիսի ներուն. բայց անոնց որ հակառակ չեն այս առաջարկի սկզբունքին և սակայն կը հակառակին գործքով, կը բաղձամ յիշեցուցանել թէ իրենց նախանձոտ հակառակութեանը համար ըստ մասին պատասխանատու են պատահող անկարգութեանց և ազգային չարեաց։

Ղ. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ

ԳՈՐԾԱՒՆԷՈՒԹԻՒՆ ԱՄԵՐԻԿԱՑԻ ՀԱՑՈՑ ՄԷՋ

Կոտորածի լուրն որ օտարականաց իսկ սոսկում պատճառեց, բնական էր որ բոլորովին կրակ դարձուներ Հայերն ամեն ուրեք։ Ամեն ուր որ ժողով անելու չափ Հայեր կը գտնուէին, ի մի վայր եկին, ժողով կազմեցին և խօսեցան։ Մինիապոլիսի մէջ Հայասիրաց ընկերակցութիւն մի կազմուեցաւ կարեւոր Ամերիկացի անդամներով, Տիար Քիրէչեան լինելով քարտուղար։ Նիու Եորքի մէջ 20 Ամերիկացի նշանաւոր քաղաքացիներէ Ցանձնախումբ մի կազմուեցաւ որոյ նպատակն է հանգին Մաս-միթինկ մի անել Դեկտեմբերի սկիզբներն, յորում եպիսկոպոս Փոթըր, Տոքթ. Կրիր, Տոքթ. Էպպոթ և այլ երեւելի քաղաքացիներ պիտի ատենախօսեն Հայոց խնդրոյն վերայ։ Պոսթոնի մէջ միթինկ մի արդէն եղած է ուր կարեւոր անձինք խօսած են։

Ֆրէգնոյէն կը գրեն մեզ Նոյ. 19 թուով «Կոտորածին լուրն մեզ հասնելուն յաջորդ օրն բոլոր Հայերս ժողովուեցանք ծայրագոյն յուզման մէջ։ Ամեն կողմէ կ'առաջարկուէր որ անմիջապէս հեռագրաւ մեծ պետութեանց դիմեմք։ Բայց այդպիսի դիմումներ ունին դժուարութիւններ և արդիւնքն ալ երկբայական է։ Նոյ. 19ի երկուշաբթի օրն բոլոր Հայեր, ի նշան սգոյ, գոց պահեցին իրենց գործատեղիները, թուով իբր 25։ Խանութներուն վերայ սգոյ յայտարարութիւն փակցուած էր ծանուցանելու համար սգոյ պատճառն։ Նոյն աւուր ժողովին մէջ ոմանք երգեցին, ոմանք ատենախօսեցին և ամեն ոք արտասուեց։ 200 տոլար հանգանակեցին անմիջապէս մեծ միթինկի ծախուց համար։»

Ի՞ՆՉ ԱՆԵԼ ՊԷՏՔ Է

Ամերիկայի Հայերն ի՞նչ անել պարտին այս միջոցիս։ Ամերիկայի մէջ հանրային կարծիքն յուզել, մաս-միթինկներ անել, յօդուածներ հրատարակել, ինչպէս որ կ'անեն արդէն։

Նիու Եորքէն, Նոյ. 17ի Հայոց ընդհանուր ժողովի կողմէն, մեծ պետութեանց դիմում եղաւ։ Մեք կը կարծեմք թէ Ամերիկայի ուրիշ հայ գաղթականութեանց կողմէ ևս նոյնպիսի դիմումներ զատ զատ անել աւելորդ է և անօգուտ։

Երբ հեռագրաւ կամ նամակաւ մեզ խորհուրդ հարցան ատոր անտի, պատասխանեցինք այս մտօք, և միայն խրատ տուինք որ իրենց տեղական շրջանումը աշխատին օտարաց ազդել։

Պէտք է նաև զգուշանալ Ուօշինկթընի կառավարութիւնն այս միջոցիս նեղ-

լէն Հայ-Ամերիկացիներու պաշտպանութեան խնդրոյն։ Մեք որ այժմ Նախագահէն կը խնդրեմք որ, եթէ կարելի է, յօգուտ մեր ազգային դատին ազդեցութիւն ի գործ դնէ Դրան վերայ, պէտք չէ որ երեսին զարնեմք մենէ մի քանիներն պաշտպանելու մէջ իւր անցեալ թուլութիւնն։ Վստահ լինիմք թէ Թրքաց խըժդժութիւնն հանդէպ Հայոց այսպէս հըռչակուած և սոսկում ազդած լինելէն յետոյ՝ Հայ-Ամերիկացւոց պաշտպանութեան գործն այսուհետև շատ աւելի ուշադրութեան պիտի արժանանայ։

Խրատ կուտամք նաև որ միսիոնարաց դէմ գանգատելուն վերջ տրուի։ Միսիոնարք շատ սխալ գործած են, և այս մեր տագնապին մէջ ալ նոքա Դրան հալածանքըն իրենց վերայ չհրաւիրելու համար յաճախ երկչոտութեամբ կը վարուին։ Մեք կ՚ուզէինք որ նոքա աներկիւղ բողոքներ անելով հալածուէին, նահատակուէին ի Թրքաց։ Սակայն նոքա ալ իրենց հաշիւնգր ունին և իրենց տկարութիւններ։ Շընորհակալ լինինք որ հարստահարութեանց դէպքեր երբեմն կը տեղակագրեն Ամերիկայի թերթերուն. և խոստովանինք թէ վերջին կոտորածին լուրերն Բաղէշի և Վանի միսիոնարներուն առանձին նամակներոյն հաստատուեցան ի Լոնտոն և աստ։ Չափաւոր լինինք ուրեմն և զգուշանանք մեր հրապարակախօսութեանց և յօդուածոց մէջ միսիոնարաց դէմ խօսելէ, վասն զի անկարելի է մեզ այս երկրին ընդհանուր հասարակութեան մեր մեղադրանաց իրաւացի հիմունքն պարզել մի քանի խօսքով կամ յօդուածով, և ինչ որ ասենք հակառակ միսիոնարաց, պիտի թուի Ամերիկացւոց տնհաճոյ և ապերախտ։ Ուրեմն ապագային թողունք զիրենք այս մասին լուսաւորելու երկար և փափուկ խնդիրն և այժմ զգուշանանք իրենց առաքեալները նախատելէ և իրենց միտքն չփոթելէ մինչ կը բաղձամք որ մեր վիճակին ցաւակցին և Թրքին դէմ իրենց սոսկումն արտայայտեն առանց վերապահութեան։

ՀԱՅՔԻ ՄԱՍԻՆ

Թէ «Հայք» պիտի կրնա՞յ հրատարակուիլ 1895ին, դեռ ստոյգ չէ։

Ամերիկայի 6000 Հայերէն հազիւ 150 հոգի բաժանորդ եղած է «Հայքի»1894ին։ Ուրիշ 300 հոգիք գոնէ կրնային բաժանորդ լինիլ, քանի որ թերթն Ամերիկայի մէջ հիմնուած է և ազգային շահեկանութենէն զատ ունի մասնաւոր կարեւորութիւն Ամերիկայի Հայոց համար։

Ուրիշ երկիրներու Հայ գաղթականք կրնան ուրեմն ասով չափել Ամերիկայի Հայոց խելքն ու լրջութիւնն։

Որոշեցինք ուրեմն Հայքի հրատարակութիւնն դադրեցունել Դեկտ. ի թիւն վերջինն հռչակելով։

Բայց Նիւ Եորքի ազգայիններէն ոմանք չթողուցին մեզ այդ յայտարարութիւն անել։ Դոքա «Հայքասիրաց Միութիւն» մի երկու շաբաթէ ի վեր կազմել սկսած են, որոյ նպատակն պիտի լինի փորձել հաստատ հիման վերայ դնել Հայքի Հրատարակութիւնն գէթ 1895 թուականին համար։ Մեք ուրեմն գիջանելով նոցա խնդրոյն, պիտի սպասեմք նոցա ձեռնարկի արդիւնքին դեռ 15 օր։

Մի քանի հեռաւոր տեղեր եւս դիմում եղած է, որոց պատասխանին կը սպասուի։

Դեկտ. ի վերջին թուով պիտի կրնամք ծանուցանել թէ 1895ին Հայք պիտի հրատարակուի՞ թէ ոչ։

Մի քանիներ 1895ին համար այժմէն յղած են մեզ բաժնեգինն, երկու տոլար. այդ գումարներ ետ պիտի վերադարձունեմք եթէ որոշեմք Հայքն դադրեցունել։

Կը խնդրեմք ուրեմն որ բաժնեգինք չյղուին առ այժմ։

Սակայն կայ բան մի զոր այժմէն կըրնան անել այս թերթի հին բաժանորդները ու բարեկամք—կրնան բաժանորդացանկեր պատրաստել և մեզ յղել մինչեւ Դեկտ. 12, գաղափար մի տալու համար թէ մերձաւորապէս ո՛րքան բաժանորդ պիտի կրնայ ունենալ Հայք եթէ հրատարակուի.

Հայքի բաժնեգինն պիտի լինի երկու տոլար 1895ին եւ, Ամսօրեայ կամ կիսամսեայ, ընդարձակ կամ համառօտ լինելն պիտի որոշուի միջոցներուն համաձայն.— պէտք է մեր վերմակին համեմատ երկնցունեմք մեր ոտքն. այս է մեր հաստատ որոշում այս անգամ, եթէ վերսկսիմք։

Հայք այս անգամ փոխանակ 16ի 8 երես է. միւս 8 երեսներն պիտի հրատարակուին իբր 15 օրէն

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

ԼՈՆՏՈՆԻ ԹԱՅՄԶ.— Ցանձնախումբն զոր Սուլթանն նշանակած է Հայաստանի մէջ ենթադրեալ խժդժութիւններն քննելու համար պիտի բաղկանայ հետեւեալ անդամներով. Ապտուլլահ փաշա, Թէվֆիք փաշա (զինուորական), Նաճիպ Պէյ (տնօրէն ներքին գործոց նախարարութեան ընդհանուր քարտուղարի գրասենեկին) և Իօմէր Պէյ (խնայողական դրամատան տնօրէն։)

Տէյլի Նիւզի կը հեռագրեն Նոյ. 18ին ի Պոլսոյ թէ «Բ. Դուռն փոխանակ (անգլիական դեսպանին կողմէն) յղուած տեղեկութիւնն բարեկամական ոգւով ընդունելու, գահավէժ ու բացմամբ պատասխանեց և պնդեց թէ Տիար Հալուըրտի տեղեկութիւնք սուտ են և թէ նա զՀայս յապստամբութիւն քաջալերեր է. ամբաստանութիւն որ զՏիար Հալուըրտ ճանաչող ամեն ումեք, ինչպէս ինձ, ծաղրելի կերպիւ արտառոց է»։

Անգլիացին Լինչ, մեր ընթերցողաց քաջ ծանօթ, Լոնտոնեան Թայմզի (Նոյ. 20) ուղղած է մի ընտիր նամակ յորում կը բացատրէ Սասնոյ և ուրիշ կողմանց Հայոց յուզմունքն։ « Ցորչափ (Թուրք կառավարութիւնն) թող տայ որ Քրդերն Հայաստանի լեռնադաշտին վերայ չարունակ Հայով կերակրուին, ցորչափ զինուորագրութեան մենաշնորհներն ծառայեն պարապել ոճրագործներն ընդդէմ քաղաքային արդարութեան, Հայկական խնդիրն պիտի մնայ մեզ համար և դուցէ լինի լուցկին մեծ պատերազմի մը որ իւր մէջ քարշէ այսօրուան երեւցողներէն զատ ուրիշներ ևս։ Եթէ մեր դիւանագիտութիւնն չյաջողի հասկացունել Դրան թէ իրենց ներկայ քաղաքականութիւնն հանդէպ Հայոց չարունակելով իրենց ասիական պետութեան գերեզմանն կը փորեն, հետեւանքն ոչ միայն Թուրքիոյ այլև մեզ համար յոյժ ծանր պիտի լինին հաւանօրէն։»

Զրոյց կայ թէ Ռուսիա և Անգլիա համաձայնած են կամ համաձայնելու վերայ Ասիական խնդրոյ նկատմամբ։ Եթէ այս ստուգուի լիովին, հաւանական կը համարուի որ Ռուսիա յանուն երկու պետութեանց գրաւէ զՀայաստան և մտցուի խակոյն բարուոք վարչութեան։ Այս զրոյցներ անարժէք են։

Նիւ Եորքի Հայկական Միութիւնն իւր 17 Նոյ. ի նիստն ընդհանուր ժողովի վերածեց և ատենապետութեամբ Տիար Տինեանի առաջարկութիւններ քուէարկեց ուղղեալ առ Նախագահն Միացեալ Նահանգաց և առ Մեծ Պետութիւնս, բողոքելով Սասնոյ ժողովուրդն կոտորող կառավարութեան դէմ։

Սոյ Տ. Մկրտիչ Կաթողիկոսն վախճանած է։

Տիար Յովհաննէս Թաշճեան, քաղաքիս Հայ վաճառականներէն և Հայկական Միութեան նախագահ, յայցելութեանըն ի Կ. Պոլիս ամուսնացած է և իւր տիկնոջ հետ վերադարձած է ի քաղաք։

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐ

ՀԷՐԱԼՏ, 4 Դեկտ.—Լոնտոնի ԹԱՅՄԶն կ'ըսէ թէ յետագոյնք տեղեկագիրք Թուրքական վայրագութեանց մասին կատարելապէս ճշմարիտ են։

Կը խնդրեմք որ մընի օրտըրի կամ մանտա տը փօսթի միջոցաւ խմբագրութեանս դրամ յղողներն՝ Նիւ Եորքի փոստ օֆիսին Station E (Եդ ճիւղ)ին ձեռքով զայն մեզ հասցունելու հրահանգ տան իրենց քաղաքի թղթատան։ Այսպէսով մեծ դիւրութիւն ընծայած կը լինին մեզ։

NEUMANN BROTHERS
Առաջնակարգ կազմարարք Նիւ Եորքի
76 E. 9դ Փողոց
Պրոտուէյի մօտ

Հայքի տարեկանն կը կազմեն 1 տոլարով, անունն ալ Հայերէն գրելով։ Կը կազմեն ամեն ուրիշ լեզուաւ ամեն տեսակ գրքեր։

«Հայքի» Նախորդ տարիներն կը վաճառուին հետեւեալ գներով.

Ա. տարի, 1 տոլար 50 սէնթ կամ 7.5 Ֆր.
Բ. ,, 2 ,, կամ 10 Ֆրանք։
Գ. ,, 2 ,, ,, ,, ,,

ԴԻՒՐՈՒԹԻՒՆ ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆԸՆ

ՄԱՐԴՈՑ ԵՒ ՍՏԱԿԻ

Նաւերու տոմսակ կուտանք դէպ ի Թուրքիոյ կամ Եւրոպիոյ ուէ կողմ երթալ ուզողներուն։ Մասնաւոր գծեր ունիմք ուղղակի Թուրքիա կամ Ռուսիա տանելու։ Մեծ դիւրութիւն մը կը լինի ճամբորդներուն երբ հոս գիտեն թէ ինչ գծով պիտի ուղեւորին, և տոմսակնին կը գնեն մէկէն, որով թէ՛ աժան գնով պիտի առնեն և թէ՛ օտար երկիրներու մէջ տոմսակ գնելու համար միջնորդներու պէտք չունենան և չխաբուին։ Նոյնպէս Եւրոպայէ դէպի հոս եկողներուն ևս մեծ դիւրութիւն է տոմսակը հոս գնել և խրկել, որ ստակը չկորսուի և չխաբուին ինչպէս շատերուն եղած է։ Այնէնէն լաւ գիծը գիտցուած է ՖՐԷՆՉ ԼԱՅՆը որուն վրայ բոլոր ճամբորդներէն գոհունակութիւն լսած ենք։ Նաւերը մեծ և գեղեցիկ են և արագ կ'երթան. լաւ կերակուր և գինի կուտան, և աժան գնով։

Նաև մեր տանց ստակի փոխադրութիւնը տարիներէ հետէ գոհացուցած է բոլոր յաճախորդներն։ Փորձառուներէն հասկցիր ստակդ ձեռքէդ հանելէդ առաջ որպէս զի չխաբուիս, երբ ըսեն թէ ուրիշներէն աժան կուտանք։ Ապահովութիւնը բոլոր շահերուն մեծագոյնն է։ Աշխատ տարիներու փորձառութիւնը մեծ ապահովութիւն մ'է։ Աստի ստակ և տոմսակ Թուրքիոյ կամ Եւրոպիոյ ուէ կողմ խրկել ուզողներ կամ տեղեկութիւն ուզողներ կրնան դիմել հետևեալ հասցէին։

Նամակներու պատասխանները չուտով կը գրուին։

D. M. SHOOSHAN
41 Exchange St., Worcester, Mass.

«ՄԱՐՁԱՐԱՆ», դասագիրք զինուորական կրթութեան, բազում ձևերով բացատրեալ. աշխատասիրեաց Գրիգոր Գասպարեան. Տպարան Մ. Ս. Գաբրիէլեանի գին 50 սէնթ կամ 2 ու կէս ֆրանք։

ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՑԵԱԼՆՈՒ ԱՊԱԳԱՅՆ, 1888, նախապէս «Արևելք»ի մէջ հրատարակուած. գրեաց Մ. Ս. Գաբրիէլեան։ Գին 20 սէնթ կամ 1 ֆր.

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

Ազգային Քաղաքականութեան վերայ հանրային ուշադրութիւնն աւելի գրաղեցուցնելու և կարող գրիչներն նոյն կենսական խնդրոյ վերայ շարժել տալու նպատակաւ ի լոյս ընծայուած է այս ուսումնասիրութիւն։ Գինն է 50 սանթիմ կամ 10 սէնթ։

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՔ

Ազգային ատենախօսութեանց այս հաւաքածոյին մէջ ընթերցողք պիտի գտնեն հարստահարութեանց և Դրան հակահայ քաղաքականութեան ահաւոր նկարագիրն և միանգամայն Ամերիկայի Հայոց ազգային շարժմանց առաջնորդողի մի փորձառութեան և ձգտմանց շրջափոխութիւնն։

Գին 20 սէնթ կամ մէկ ֆրանք։

ԱՐՈՒԵՍՏ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ, 21 դաս 16 պատկերօք և յաւելուածով ազգային ու օտար հատընտիր ընթերցուածոց, երկասիրութիւն Մ. Ս. Գաբրիէլեանի, 1891, գին 1 թալէր կամ 5 ֆրանք։

«ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ» կենսագրական տեսութիւն ի Մ. Ս. Գաբրիէլեանէ, հանդերձ պատուական և լաւ յաջողեալ պատկերաւն Հայրիկի։ 189 , գին 10 սէնթ կամ 50 սանթիմ։

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ